

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ԵՒԴՈՒԿԻԱՅԻ.—Մբ. կնիքը 1815, Նւ. Աժտէրխանի 1817ին, Նւ. Հնդկաց, խորհրդական և դարպասընկալ 1824ին, փոխ. (1833-34). իր անունով կայ յիշատակարան մը՝ Բեթղէհէմի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցիին տեառնական պատկերի մը ստորև. «Յիշատակ է անական. սբ. պատկերս սբ. Յակոբայ միաբան Թօխատցի Կարապետ Վրպին. որ հընստտոնայ իմտատիէճի. Թվին ՌՄԾԹ (=1810) Ապրիլ Ա.ին»։ Կարապետ արքեպս. իր Հնդկաց եւ Աժտէրխանի նուիրակուած թիւններէն շատ ընծաներ բերած է Ս. Յակոբի վանքին։

Եթէ վերոգրեալ 1815 թուականով «կնիքը» իր եպս. ական. կնիքը նկատենք, հաւանական է որ միեւնոյն անձը ըլլայ Կարապետ արք. Թօխատցի որ 1803ին արք. կը ձեռնադրուի և նոյն թուականին կը կարգուի տեսուչ Ս. Յարութեան եւ ՌՄԾԸ (=1809)ին ալ, ՄԶ. Թ. 1 Ճատրնիսիին ցանկը կը շինէ եւ կ'ստորագրէ Եւզոկիացի «երբեմն գրագիր» երբեմն Խմբիսա՛ Կարապետ արքեպս » անունով։ Կարապետ արքեպս. Եւզոկիացի վախճանած է 1849 դեկտ. 16ին, եւ թաղուած է Ս. Փրկչի վանքը, վաստակաւորներու շարքին, իր տապանագիրը հետեւեալն է. «Այս է տապան հանգստեան Սրբոյ աթոռոյս միաբան Հնդկաց նուիրակ և բազմաշխատ վէքիլ Եւզոկիացի Կարապետ Արքեպիսկոպոսին որք հանդիպիք տուք զոգորմին. 1849 դեկտ. 16. »։

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ՄԱԶԼԸՄԵԱՆ, ՊԱՐՏԻԶԱԿՅԻ.— Ծ. 1870ին, շրջանաւարտ Պարտիզակի Ազգ. Վարժարանին 1887ին, Զո. 1894ին Պարտիզակի մէջ. տեսուչ և ուսուցիչ ազգ. վարժարանին (1893-1895), նոյն պաշտօններով Ատաբաղար և քարոզիչ տեղւոյն Ս. Լուսաւորիչ և Ս. Կարապետ եկեղեցիներուն (1895-1900), առ. փոխ. Նիկոմիդիոյ Թեմոբէից, (1900-1905), նախ առ. տեղապահ Պանտրմա-Պալլքէսէրի և ապա առ. նոյն թեմին (1905-1908), եպս. կը ձեռնադրուի 1910ին, 1915ին Ընդհ. պատերազմին՝ իր հօտին հետ տեղահանուած կը տարագրուի Քիլիսի էջրիէ ըսուած տեղը. 1916ին Երուսաղէմ կը հրաւիրուի իբր անդամ նորակազմ Սինոզի եւ մէկ տարիի չափ կը մնայ նոյն պաշտօնով. 1917ին Սահակ կթղ.ի և ուրիշ սինոզականներուն հետ կը տարագրուի Դամասկոս՝ ուր կը կարգուի տեսուչ տեղւոյն սրբանոցներուն. զինազաղարէն վերջ կը մեկնի Պոլիս, ուրկէ կը դառնայ Պանտրմա. բայց քիչ յետոյ Քէ-